ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2024 թվականի N 672-Ա

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԹՈՒՂԻՆ, ՉՎԱՑՈՒՑԱԿԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 03-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Արարատ համայնքի ներհամայնքային միկրոավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Արարատ համայնքի ներհամայնքային երթուղու չվացուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Արարատ համայնքի ներհամայնքային երթուղու մրցույթի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Հաստատել Արարատ համայնքի ներհամայնքային երթուղու մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված 4-ի:
5. Հանձնարարել մրցութային հանձնաժողովին՝ կազմակերպել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

08 ապրիլի 2024 թ.
ք. Արարատ

Հավելված 3
Արարատ համայնքի ղեկավարի
2024 թվականի ապրիլի 8-ի
N -672 Ա որոշման

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	ԵՐԹՈՒՂՈՒ՝					
	անվանումը և համարը	սկզբնակետը (երթակարգ-վարական կետ)	վերջնակետը (երթակարգ-վարական կետ)	տեսակը (միկրոավ-տոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների քանակը (ներառյալ պահուստային և հաշմանդամու-թյուն ունեցող անձանց համար հարմարեցված ավտոբուսների քանակը)	Մրցույթի անցկացման օրը
1.	Ներհամայնքային	Ք. Արարատ, Շահումյան փողոց 6/6 հասցեի ավտոկայան	ՈԿՖ բանավան, կենտրոնական այգուն հարակից կանգառ	Միկրոավտոբուսային	2	24/05/2024 թ.
2	Ներհամայնքային	Ք. Արարատ, Շահումյան փողոց 6/6 հասցեի ավտոկայան	գ.Նոյակերտ, մշակույթի տան հարակից կանգառ	Միկրոավտոբուսային	1	24/05/2024 թ.

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա.Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Կարապետյան